

ՀԱՐԳԵԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ,
LIFE ԾՐԱԳԻՐԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է
ՁԵՐ ԳԱԼԻՔ ԱՄՔԱՆՈՐԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ:

LIFE

2012-2014

28

գրադվածության
կենտրոններում
տեղադրվել է MAST
սարքավորումը

200

երիտասարդ
հաշմանդամ ընդունվել
է ՄԿՈՒ
հաստատություններ

485

հաշմանդամ
մասնակցել է
«Աշխատանքի
պատրաստվածության»
դասընթացներին

887

ՄԿՈՒ
աշխատակիցներ
վերապատրաստվել են
հաշմանդամների հետ
աշխատելու
համար

420

երիտասարդ
հաշմանդամ
ստացել է
մասնագիտական
կողմնորոշում

395

հաշմանդամություն
ունեցող անձ
տեղավորվել է
աշխատանքի LIFE
ծրագրի սկզբից

17

սոցիալական
ձեռնարկություն
է ստեղծվել

900

հաշմանդամություն
ունեցող անձ ստացել է
մասնագիտական
կրթություն

LIFE – «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում գրադվածության խթանման միջոցով» ծրագրի

ՏԵՂԵԿԱԳԻՐ

#12- դեկտեմբեր 2014



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՐԴՑ



Save the Children

LIFE ծրագիրը (2012-2015) իրականացնում է «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Ծրագրի գործընկերներն են «Ակտիվա» միջազգային հիմնադրամը, «Ունիսոն», «Էյջ-Դի-Փի հիմնադրամ» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ները:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Զբաղվածության պետական գործակալության և գրադվածության կենտրոնների, հաշմանդամություն ունեցող անձանց և ՀԿ-ների, մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, ծառայություններ մատուցողների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների հետ:

Այս համարում կարդացեք՝

- *Աշխատանքի տոնավաճառ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար*
- *Աշխատանքային-խորհրդատվական այցեր Երևանում, Շիրակի և Լոռու մարզերում*
- *«Ես աշխատում եմ» ֆոտոցուցահանդես*
- *Տեղեկատվական թերթիկ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար*
- *Շիրակի պետական տարածաշրջանային քոլեջի կողմից իրականացվող Փոքր դրամաշնորհային ծրագրի ավարտական ցերեկույթ*
- *Նաիրային բաժին հասած «Երկնային մանանան»*



ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՆՈՎԱՃԱՌ՝ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ



Վերջին շրջանում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հիմնահարցը առավել մեծ հնչեղություն է ստանում, ինչը պայմանավորված է մի քանի հանգամանքով՝ լրատվամիջոցների կողմից բազմակի անդրադարձ թեմային, նոր հմտություններ, մասնագիտություն ստանալու և հավասար հիմունքներով աշխատանք գտնելու պահանջարկի ավելացում հաշմանդամների շրջանում, խոցելի խմբերին վերաբերող զբաղվածության պետական ծրագրերի իրականացում և այլն: Բացի այդ, այս ամենի արդյունքում գործատուները նույնպես սկսում

են ավելի շատ գնահատել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային ներուժը:

Այս գործընթացի բոլոր բաղկացուցիչ գործոնների խթանումը նաև LIFE ծրագրի արդյունավետ գործունեության հետևանքն է. 2012 թվականից ի վեր ծրագիրը համագործակցում է կրթական հաստատությունների, գործատուների, պետական կառույցների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների հետ՝ խթանելու հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը:

Ծրագրի ունեցած դրական արդյունքների մասին են վկայում նաև աշխատանքի տոնովաճառները, որոնք կազմակերպվում են հաշմանդամություն ունեցող անձանց համար, թիրախային մարզերում և Երևանում, տարեկան մեկ անգամ, և յուրաքանչյուր տարի զգալիորեն մեծանում է դրանց մասնակցող հաշմանդամներու և գործատուների թիվը:

Երևանյան 3-րդ տոնավաճառի կազմակերպիչներն էին «Ունիսոն» հասարակական կազմակերպությունն ու ՀՀ զբաղվածության պետական գործակալությունը: Միջոցառման նպատակն էր՝ ստեղծելով գործատու-հաշմանդամ անմիջական հանդիպման հնարավորությունը, նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից թափուր աշխատատեղերի համալրմանը և դրանով իսկ վերջիններիս աշխատանքային ներուժի արդյունավետ օգտագործմանը:

Միջոցառման բացմանը ծրագրի արդյունքների, նպատակի կարևորության և առկա բարդությունների վերաբերյալ ելույթ ունեցան «Ունիսոն» ՀԿ գործադիր տնօրեն Արմեն Ալավերդյանը, ՀՀ զբաղվածության պետական գործակալության պետ Արտակ Մանգասարյանը, ԱՄՆ ՄԶԳ ներկայացուցիչ Տաճատ Ստեփանյանը և «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության LIFE ծրագրի տնօրեն Ջինա Սարգիզովան: Իսկ LIFE ծրագրի իրականացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման

գործում առանձնահատուկ ներդրում կատարած 6 ընկերություններին հանձնվեցին շնորհակալագրեր:

Բուն տոնավաճառի ընթացքը նույնպես ուղեկցվեց նորամուծություններով: Բացի գործատուներից, որոնք ներկայացրել էին աշխատատեղեր տեղեկատվական տեխնոլոգիաների և կառավարման բնագավառի ոլորտում, ինչպես նաև համակարգչային գործավարի, ոսկերչի, մերսողի, խոհարարի և բանվորություն թափուր աշխատատեղեր տոնավաճառին ներկայացված էին հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու մեծ փորձ ունեցող միջին-մասնագիտական կրթական հաստատությունները: Այսպիսով, այն այցելուները, որոնք տոնավաճառի արդյունքում բախվում էին այն հանգամանքին, որ նրանց մասնագիտությունը ներկա աշխատաշուկայում մեծ պահանջարկ չունի, հնարավորություն էին ստանում վերոնշյալ կրթական հաստատությունների հետ միանգամից պայմանավորվել նոր հմտություններ և կրթություն ստանալու մասին:



Տոնավաճառի ընթացքում դահլիճի մեջտեղում տեղադրված էր LIFE ծրագրի շնորհիվ լայն կիրառություն գտած ՄԱՍՏ թեստը: Այս թեստի միջոցով բոլոր ցանկացողները կարող էին փորձարկել աիրենց աշխատանքային հնարավորությունները:

Հնարավոր չէր չնկատել աշխատանք փնտրողների մոտեցումների և պատրաստվածության մեջ կատարված դրական փոփոխությունները: Քանի որ այցելուների զգալի մասը այս 3 տարիների ընթացքում անցել էր LIFE ծրագրի դասընթացը, ռեզյումեի պատրաստի նմուշներ ցանկացողների թիվը նվազել էր, քանի որ արդեն ունեին իրենց կողմից պատրաստվածները: Իսկ տոնավաճառին մասնակցած շուրջ 40 գործատուների շրջանում անցակցված անանուն հարցումը ցույց տվեց, որ ընկերությունները շատ հակված էին համալրել իրենց աշխատակազմը հաշմանդամություն ունեցող անձանցով:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ-ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՅՑԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ,
ՇԻՐԱԿԻ ԵՎ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԵՐՈՒՄ**

LIFE ծրագրի շրջանակներում նոյեմբերի 11-ից 13-ը «Ակտիվա» միջազգային հիմնադրամի փորձագետները «Հյուման դիզնիթի ընդ փիս» /HDP/ հիմնադրամի սոցիալական աշխատողների հետ միասին մի շարք աշխատանքային այցեր կատարեցին Երևանի, ինչպես նաև Լոռու և Շիրակի մարզերի զբաղվածության կենտրոններ: Աշխատանքային այցերի շրջանակում կազմակերպվեցին



մի շարք հանդիպումներ Երևանի և մարզերի զբաղվածության կենտրոնների աշխատակիցների և տնօրենների, ինչպես նաև ծրագրի գործընկեր «Լիարժեք կյանք» ՀԿ-ի նախագահի և Ստեփանավանի գրասենյակի աշխատակազմի հետ:

Աշխատանքային այցերի նպատակն էր խորհրդատվություն տրամադրել MAST թեսթի կիրառման գործընթացում դժվարություններ ունեցող աշխատակիցներին, ինչպես նաև քննարկել մի շարք հարցեր հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունների գնահատման և աշխատանքի

տեղավորման վերաբերյալ:

Աշխատանքային այցերի ընթացքում տրամադրված խորհրդատվությունն ու աջակցությունը, ըստ զբաղվածության կենտրոնների աշխատակիցների, բավականին արդյունավետ էին և տեղին:

«ԵՄ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՄ» ՖՈՏՈՑՈՒՑԱՀԱՆՂԵՄ

LIFE ծրագրի իրականացման ընթացքում հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձանց կյանքում տեղի ունեցան դրական փոփոխություններ՝ մասնագիտական աճ, աշխատանքի տեղավորում և պարզապես սոցիալական շփման հմտության զարգացում: Այդ արդյունքները պատկերավոր կերպով ներկայացվեցին նոյեմբերի 28-ին LIFE ծրագրի շրջանակներում «Մոսկվայի տանը» կայացած ֆոտոցուցահանդեսին: «Ունսիսոն» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Ես աշխատում եմ»



խորագիրը կրող այս միջոցառումը ներկայացվեցին համակարգչային ձևավորման, զոդման, խոհարարության, բանվորության գործընթացը պատկերող լուսանկարներ, որոնց հերոսներից յուրաքանչյուրը մի հաջողված պատմություն ունի:

Լուսանկարիչներ Մարիաննա Մելիքսեթյանը և Ռասմիլա Ալավերդյանը մեծ վարպետությամբ փոխանցեցին աշխատանքային եռուզեռը, ներկայացրեցին հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային ներուժն իր ողջ բազմապիստության մեջ: Հատկապես տպավորիչ



Էր «Ունիսոն» ՀԿ-ի կողմից կազմակերպված վիդեոմոնտաժի դասընթացին մասնակցած երիտասարդի լուսանկարը, որում նա համակարգչային առաջադրանքները կատարում է ոտքով: Նման լուսանկարները մարտահրավեր են նետում հասարակության տարբեր խմբերի շրջանում հաշմանդամների հնարավորությունների մասին առկա կարծրատիպերին:


Նկարահանումները կատարվել էին Երևանում և LIFE ծրագրի թիրախային մարզերում (Լոռի, Շիրակ, Գեղարքունիք), ինչպես նաև Սյունիքի Գորիս քաղաքում, որտեղ բացվել է LIFE-ի շրջանակներում հիմնված 17 նորաստեղծ սոցիալական ձեռնարկություններից մեկը:

Ես աշխատում եմ... շատ հաճելի կլիներ, որ այս բառերն արտասանող հաշմանդամություն ունեցող անձանց թիվը տարեցտարի ավելանար, իսկ աշխատանքային միջավայրը դառնար իսկապես ներառական:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻՎ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՐ

LIFE ծրագրի շրջանակներում «Հյուսան դիգնիթի ընդ փիս» (HDP) հիմնադրամն կազմակերպում է բազմաթիվ միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հիմնախնդիրների կարգավորմանը: Նշված գործողություններն իրականացվում են հաշմանդամություն ունեցող անձանց անմիջական մասնակցությամբ և ակտիվ համագործակցությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված շուրջ 195 000 հաշմանդամություն ունեցող անձանցից մոտավորապես 12000-ը տեսողության խնդիրներ ունեցող անձինք են՝ HDP հիմնադրամը հանդես էկավ Ձբաղվածության պետական գործակալության կողմից իրականացվող աջակցության ծրագրերի մասին տեղեկատվության Բրայլյան տառատեսակով տպագրությամբ: Նպատակն էր՝ այս տեղեկությունները մատչելի դարձնել նաև տեսողության խնդիրներ ունեցող անձանց:



Արդյունքում՝ տպագրվեց պետական աջակցության ծրագրերի Բրայյան տարբերակի 500 օրինակ: Տպագրությունն իրականացվեց «Մանկան աչքեր» բարեգործական հիմնադրամի կողմից, որը նույնպես զբաղվում է տեսողության խնդիրներ ունեցող անձանց հիմնահարցերով:

ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԱԾԱԾՐՋԱՆԱՅԻՆ ՔՈԼԵՋԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ

2014 թ.-ի դեկտեմբերի 16-ին ԱՄՆ ՄԶԳ և Մեյվ դը շիլդրենի ներկայացուցիչները մասնակցեցին Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում կազմակերպված «Մասնագիտական կրթություն հաշմանդամություն ունեցող անձանց համար» ծրագրի ավարտական ցերեկույթին:



Այս ծրագրի շրջանակներում Շիրակի պետական տարածաշրջանային քոլեջը 171 հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈՒԱ) համար կազմակերպել էր կարուձևի, վարսահարդարման, համակարգչային օպերատորության, խոհարարության և ծաղկարվեստի կարճաժամկետ դասընթացներ: Շահառուներից շատերը անցել են աշխատանքային պրակտիկա, իսկ մի մասն էլ տեղավորվել է աշխատանքի:

«Մասնագիտական կրթություն հաշմանդամություն ունեցող անձանց համար» ծրագիրը մաս էր կազմում LIFE ծրագրի շրջանակներում իրականացվող Հայաստանում ներառական

մասնագիտական կրթությունը խթանող Փոքր դրամաշնորհների ծրագրի: Փոքր դրամաշնորհների ծրագրի շրջանակներում Երևանում և թիրախ մարզերում (Լոռի, Շիրակ, Գեղարքունիք և Արարատ) ՀԿ-ների և միջին մասնագիտական և արհեստագործական կրթական հաստատությունների կողմից իրականացվել է 13 ծրագիր, ավելի քան 950 ՀՈՒԱ համար կազմակերպվել է երկարաժամկետ և կարճաժամկետ կրթություն տարբեր մասնագիտություններով (փայտի գեղարվեստական մշակում, համակարգչային գործավարություն և օպերատորություն, ոսկերչություն (ոսկի և արծաթ), ձեռագործություն և մաքրամե, կարուձև և մոդելավորում, ծաղկարվեստ, տիկնիկագործություն, թատերական արվեստ, պար, երաժշտական տեխնոլոգիաներ և այլն): Ավելին, 44 միջին մասնագիտական և արհեստագործական կրթական հաստատությունների 887 դասախոս ստացել է ներառական ուսումնական միջավայր ստեղծելու մասին գիտելիքներ: Մշակվել, տպագրվել և ծրագրի մասնակիցների միջև բաշխվել է է երկու ձեռնարկ՝ միջին մասնագիտական և արհեստագործական կրթական հաստատությունների

դասախոսների և երիտասարդների համար: Մեծ աշխատանք է տարվել բոլոր շահառուներին և նրանց ծնողներին, դասախոսներին և սոցիալական աշխատողներին մասնագիտական կողմորոշում, ինչպես նաև հոգեբանական աջակցություն տրամադրելու գործում:

LIFE ծրագրի (2012-2015) շրջանակներում 44 միջին մասնագիտական և արհեստագործական կրթական հաստատություններում ստեղծվել է ներառական ուսումնական միջավայր, 900 ՀՈՒԱ ձեռք են բերել մասնագիտություն Երևանի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի միջին մասնագիտական և արհեստագործական կրթական հաստատություններում:

ՆԱԻՐԱՅԻՆ ԲԱԺԻՆ ՀԱՍՍԾ «ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՆԱՆԱՆ»



Նաիրային և Արտյոմին հանդիպեցի «Երկնային մանանա» ընկերությունում: Ձեռնարկությունը հիմնվել է «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ LIFE ծրագրի շրջանակներում: «Երկնային մանանա» հրուշակեղենի արտադրամասում, որ համալրված է բոլոր անհրաժեշտ սարքավորումներով, երիտասարդ ամուսինները հաշմանդամություն ունեցող իրենց մյուս գործընկերների հետ Սևանի առավոտները դարձնում են անուշաբույր ու

ախորժաբեր: Նաիրայի աչքերում լույսն ավելի է խտացել, դեմքին անսահման հանգստություն կա, որը փոխանցվում է շրջապատին: Նա աշխատում է. մեքենան լուռ հնագանդվում է նրան՝ բացելով խմորի փոքրիկ գնդերը:

Արտադրամասում առավոտները, ինչպես աշխատակիցներներն են ասում, հաճելի ծանրաբեռնվածությամբ են բացվում. յուրաքանչյուրն իր տեղում է, իրեն հանձնարարված աշխատանքն է կատարում: «Մեր թիվ 1 խնդիրը՝ աշխատանք ունենալը, արդեն լուծված է», - ուրախությամբ ասում է Արտյոմը: «Ես և կինս գրանցված էինք զբաղվածության կենտրոնում՝ որպես աշխատանք փնտրողներ: Անկեղծ ասած, հույս չունեինք, թե աշխատանք կգտնենք, սակայն «Երկնային մանանա»-յում գտանք և՛ աշխատանք, և՛ լավ ընկերներ, և՛ հաճելի ու տրամադրող միջավայր», - շարունակում է Արտյոմը և շտապում ավելացնել, որ աշխատանք գտնելուց հետո Նաիրան լիովին փոխվել է. «Մեր ամեն օրն սկսվում է բարձր տրամադրությամբ»:

«Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի նախագահ Սաթիկ Բաղեյանն այս ծրագրի իրականացումը և սոցիալական ձեռնարկության հիմնումը լուրջ ձեռք

բերում է համարում Սևան քաղաքի համար, որտեղ մեծաթիվ են հաշմանդամություն ունեցող անձինք. «Հաշմանդամություն ունեցող տասնյակից ավելի մարդիկ գտել են իրենց տեղը այս արևի տակ՝ ձեռք բերելով և՛ աշխատանք, և՛ նոր ընկերներ»:

«Նաիրան կոլեկտիվի սիրելին է, բոլորի կողմից ընդունված: Էլի որոշ ժամանակ, և նա կաշխատի ինքնուրույն՝ իր ձեռքերով պատրաստելով խմորեղենը», - նշում է տիկին Բադեյանը: «Նա գոհ է իրեն բաժին հասած «երկնային մանանայից»:

Աշխատանքից բացի, Նաիրան և իր ամուսինը հանգստյան օրերին ժամանակ են գտնում զբաղվելու սիրելի գործով՝ ձևավորում ու գեղեցկացնում են իրենց փոքրիկ պարտեզը, խնամում ծաղիկները, ինչի շնորհիվ, աշխարհին նայում են պայծառ գույներով, իսկ աշխատանք գտնելուց հետո՝ նաև լավատեսությամբ ու հավատով:

Արմինե Ղուկասյան
Ք. Սևան

Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի. ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսաբանել հաշմանդամության ունեցող անձանձ ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրի օգնական Մարիա Գևորգյանին՝ Maria.Gevorgyan@savethechildren.org էլ. հասցեով:

LIFE ՏԵՂԵԿԱԳԻՐԸ պատրաստվում է ԱՄՆ ՄԶԳ Ֆինանսավորմամբ իրականացվող LIFE ծրագրի շրջանակներում: Տեղեկագրում արտահայտված տեսակետները հեղինակներինն են և կարող են չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ-ի կամ «Սեյվ դը չիլդրենի» տեսակետները:



«Սեյվ դը չիլդրենը» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենամեծ կազմակերպություններից է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք գործում են ավելի քան 120 երկրներում:

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչություն

Հայաստան, Երևան 0014, Ազատության պող. 27, 3-րդ հարկ
Հեռ.՝ (374-10) 20-10-14, 20-10-25, 20-10-29; Ֆաքս՝ (374-10) 20-12-29

Էլ. փոստ՝ Armenia@savethechildren.org

Վեբ կայք՝ www.savethechildren.net; www.life-disability.am

